ԿԻԼԻԿՅԱՆ ԳԱՍՏՈՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

Մ. Հ. ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ

Գաստոնը Կիլիկիայի հայկական պետության սահմանային ամրացված բնակավայրերից էր, որը երկար ժամանակ կռվախնձոր է հանդիսացել Անտիոքի իշխանության, Տաճարական ասպետների և Կիլիկիայի հայկական պետության միջև։ Միջնադարյան հայ և այլազգի հեղինակների գործերում պահպանվել են որոշ հիշատակություններ Գաստոնի անցյալի մասին, սակայն XX դարի ուսումնասիրողներն արդեն դժվարանում են որոշել նրա տեղը։

Միջնադարյան եվրոպացի պատմիչները Գաստոնը տեղադրել են Աղեքսանդրեկից (Իսկենդերունից) Անտիոք տանող ճանապարհի վրա։ Անտիոքի իշխանության գահակալ Տանկրեդի (1104—1112 թթ.) կենսագրությունը գրի առած պատմիչը նշում է, որ Աղեքսանդրեկի ու Գաստոնի միջև ճանապարհն անցնում է դժվարամատչելի լեռների միջով[1]։ Դա համապատասխանում է Ամանոս լեռների Բաղրասի լեռնանցքին։ Խաչակրաց առաջին արշավանքի ժամանակ Գաստոնը գրավել է Տանկրեդի գլխավորած զորախումբը։

Գերմանացի ուղեգիր Վիլլեբրանդը (XIII դար), Անտիոքից Կիլիկիա գնալիս, եղել է նաև Գաստոնում։ Նրա ճանապարհորդական հուշերում ասված է, որ Գաստոնը գտնվում էր Անտիոքից չորս մղոն հեռավորության վրա, Հայոց լեռների սահմանագծին։ Ըստ Վիլլեբրանդի, դա եղել է բավական ամուր բերդ, ունեցել է երեք պարիսպներ ու աշտարակներ և հաջողությամբ պաշտպանել է երկրի սահմանները։ 1211—1212 թթ. Գաստոնը գտնվում էր հայոց թագավոր Լևոն I-ի իշխանության ներքո, սակայն Տաճարական ասպետները բաղմիցս վճռի էին բռնվել նրա հետ բնակավայրին տիրելու համար, պահանջելով թագավորից այդ բնակավայրը հանձնել իրենց[2]։

Արաբ պատմագիր Աբուլ-Ֆեդան, նկարագրելով 1328 թ. դեպքերը, գրել է. «Ներանք (մամլուկները—Մ. Ճ.) ավերեցին ու կողոպտեցին [հայոց] երկրի այն մասը։ Հետո վերադարձան և Բաղրասի կիրճից անցնելով մտան Անտիոքի դաշտը ռաջաբ ամսի 21-ին (1298 թ. մայիսի 4-ին)... Համաթի տեր Ալ-Մալիք ալ-Մուղաֆֆարը ուղղվեց դեպի Համաթ, հասավ մինչև Կաստուն։ Այդ միջոցին Լաչինից հրաման ստացվեց վերստին հավաքել զնդերը Հալեպում և երկրորդ անգամ մտնել Սսի երկիրը։ Այս արշավանքին մասնակցեցի ես անձամբ և ականատես եղա դեպքերին սկզբից մինչև վերջ»[3]։

Դեպքերի վերոհիշյալ նկարագրությունից երևում է, որ Գաստոնը գտնվում էր Աղեքսանդրեկից դեպի Ասորիք տանող Բաղրասի լեռնանցքի արևելյան

---

[1] Vita Tancredi, 144. „Montes qui medij Alexandriolam Guastonumque oppidulam dirimunt, conscendit", *տե՛ս* Ղ. Ալիշան, *Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 427, ծան. 3։*

[2] Willebrand, Itinéraire; *տե՛ս նաև* Raoul de Cean, liv. XLV *և* Albert d'Aix, l v. XII, ch. 20.

[3] *Տե՛ս* Հ. Նալբանդյան, *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965, էջ 240։*

ծայրամասից այն կողմ, Անտիոքի դաշտի եզրում, Բաղրաս բերդից քիչ հեռու, Աղեքսանդրեկից Անտիոք տանող ճանապարհի վրա։

Անտիոքից մինչև Գաստոն հեռավորությունը 25 կիլոմետր է, որը մոտավորապես հավասար է 3,5 գերմանական մղոնի[4]։ Վիլլեբրանդի, Աբուլ-Ֆեդայի և Տանկրեդի կենսագրության հեղինակի նկարագրություններից պարզվում է, որ Գաստոնի տեղը համապատասխանում է արդի Բեկրաղ գյուղի Բաղրաս քարվանսարային կամ Բաղրաս խան կոչվող ավերված քարավանատանը։

Ըստ երևույթին Գաստոնը սկզբնապես եղել է հյուրանոց, իջևանատուն կամ պանդոկ. նրա անունը ծագում է գերմաներեն Gasthoi բառից, որը նշանակում է հյուրանոց, պանդոկ։ Մինչև օրս էլ այդ իմաստը պահպանվել է «Բաղրաս խան» կամ «Բաղրաս քարվանսարայ» անվան մեջ։

Միջնադարյան գրավոր աղբյուրներում Գաստոնը հիշվում է նաև Գասաուն (Gastoun), Գաստիմ (Gastim), Գաստ (Gast) և „Castellum de Gastum" անուններով։

XII—XIII դդ. այդ բնակավայրը հյուրանոց էր և մաքսատուն։ Նրա եկամուտները մեծ գումարների էին հասնում։ Լինելով Ասորիքից Կիլիկիա, Իսկենդերունի ծոցը և Եփրատի հովիտը տանող տարանցիկ ճանապարհների հանգույցում, Գաստոնը կարևոր նշանակություն էր ստացել այդ ճանապարհներով երթևեկող առևտրականների ու աշխարհակալների համար։ Տաճարական ասպետները և հայերը այստեղ ապահովում էին քարավանների անվտանգությունը. նրանք բավարար պայմաններ էին ստեղծել ճամփորդների հանգստի համար։ Գաստոնում կային շուկա և խանութներ (Tugurla nostra de Gastim)[5]. Սահմանակից երկրների վաճառականները մշտապես այցելում էին այստեղի շուկան։ Գանձված մաքսը և տուրքը հասնում էր Գաստոնի տեր իշխաններին կամ արքունի գանձարանին։

Գաստոնը ունեցել է ուղղանկյուն քառանկյուն հատակագիծ և գրավել է ընդարձակ տարածություն։ Նրա հյուսիսային պարսպի կողքով ու Բեկրաղ Քյոփրյուսյու փոքր կամուրջի տակով հոսում է մի գետակ, որը թափվում է Ամրկ լիճը։ Միջին դարերում այս գետակը կոչվում էր «Աղբիւրն Գաստոնի»։ Գետակի վրա եղել է քարե հին մի փոքր կամուրջ, որը մինչև այսօր մնացել է անվնաս։ Այն ունի երեք բայլ լայնությամբ մեկ ցածր կամար։ Կործանված քարավանատնից այժմ մնացել են միայն կիսափուլ պատերը։ Արդի Բեկրաղ գյուղի ծայրամասի առաջին տները կառուցված են հենց քարավանատան ավերակների դիմաց գտնվող հարթության վրա։

Գաստոնը հիմնված էր տափարակ գետնի վրա և ոչ թե քարաբլրի գագաթին, ինչպես գրում են մի քանի ուսումնասիրողներ՝ Բեկրաղ գյուղի մյուս ծայրին գտնվող Բաղրասի բերդը շփոթելով Գաստոնի հետ։ Բաղրասի բերդը գտնվում է նույն գյուղի արևմտյան ծայրին՝ մի քարաբլրի գագաթին, իսկ Գաստոնը գյուղի արևելյան մասում է։ Դրանք միմյանցից հեռու են հինգ կիլոմետր։ Պարտեզների, բանջարանոցների ու արտերի մեջ ցրված Բեկրաղ գյուղի տների տեղում, նախկինում գտնվում էր Բաղրաս քաղաքը, որը տարածվում էր Բաղրասի բերդից դեպի Ամրկի դաշտը երկարող մի նեղ հովտի մեջ։

---

4 1 գերմանական մղոնը հավասար է 7,42 կմ։
5 Տե՛ս Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 496։

Բեկրաղ գյուղում, ինչպես և շրջակայքում, լեռների լանջերին կան աղբյուրներ, որոնց ջուրը երկաթե խողովակներով բերվում է գյուղ։ Վաղ ժամանակներից սկսած Բաղրաս բերդի և Գաստոնի շուրջը եղել են պարտեզներ, արտեր ու բանջարանոցներ, որոնք ոռոգվում էին գետակի ջրով[6]։ Արաբ աշխարհագետ Իբն Բատուտան հիշատակում է այդ պարտեզներն ու արտերը։

1206 թ. Անտիոք մայրաքաղաքը գրաված Լևոն I թագավորի պարգևատրումների թվում հիշվում են նաև «Աղբիւրն Գաստոնի» և նրա շրջակա կալվածները, որոնք նվիրվում են Անտիոքի Ս. Պողոս վանքին, իսկ Գաստոնը տրվում է Տաճարական ասպետներին[7]։

Կիլիկիայի հայկական պետության մաքսատները (բաժտուն) գտնվում էին Կոռիկոսում, Կուկլակի կիրճում, Լաուղատում, Կապանում, Պորտելլայում (Portella), Բիլերկայում, Այասում և այլ սահմանամերձ վայրերում։ Մաքսատուն է եղել նաև Գաստոնում[8]։

Վիլլեբրանդը և մի քանի այլ հետազոտողներ սխալմամբ Գաստոնը նույնացրել են Բաղրաս բերդի և Գաստոնի ու Բաղրաս բերդի միջև գտնվող Բաղրաս քաղաքի[9] հետ։ Հիմք ընդունելով Դիսոյի[10] և Վան Բերշեմի[11] աշխատությունները, Ռ. Գրուսեն ևս Գաստոնը նույնացրել է Բաղրաս բերդի հետ, գրելով „Bagras = le château de Gastoun ou Gaston des croniqueurs"[12]։ Գաստոնը և Բաղրաս բերդը նույնացրել է նաև Հ. Ռ. Նալբանդյանը, Աբուլ-Ֆեդայի «Ժամանակագրության» ծանոթագրության մեջ գրելով հետևյալը. «Գաստունը ծանոթ է առավելապես Բաղրաս անվամբ։ Նկարագրված է որպես սարի ծայրին, բարձր դիրքով կառուցված դժվարամատչելի բերդ։ Սանուտոն անվանում է Bagaras։ Կոչվում է նաև «Դուռն Անտիոքայ» ու Բաղրաս»[13]։ Նկարագրության մեջ բերված տեղեկությունները վերաբերում են Բաղրասին, իսկ Գաստոնը գտնվում է հարթ վայրում։ Ռ. Գրուսեն գրում է, թե էյուբյան Սալահեդդին սուլթանը այդ ամրոցը Տաճարական ասպետներից գրավել է 1188 թ. սեպտեմբերի 26-ին, իսկ հայերը Բաղրասը գրավել են 1191 թվականին[14]։

Ըստ միջնադարյան ժամանակագիր Իմադ ալ-Դինի հաղորդած տեղեկության, Անտիոքի իշխանությունը ունեցել է երեք հզոր բերդեր։ Ռ. Գրուսեն Բաղրաս բերդը Գաստոնի հետ նույնացնելով ստեղծում է այն սխալ կարծիքը, թե Գաստոնը Անտիոքի իշխանության հզորագույն երեք բերդերից մեկն էր[15]։

---

6 Տե՛ս նույն տեղում, էջ 455, 497։

7 Նույն տեղում, էջ 497։

8 V. Langlois, Le trésor des chartes d'Arménie ou cartulaire de la chancellerie Royale des Roupeniens. Venise, 1863, էջ 95։

9 Հ. Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 38։ Յակուտ ալ-Համավի, Քիթաբ Մուջամ ալ-Բուլդան, էջ 693։

10 Dissaud, Topographie, էջ 333—334։

11 Van Berchem, Sur l'identification Baghras-Gaston, JA, 1902; I, 434.

12 R. Grousset, Hist. des Croisades et du Royaume Franc..., Paris, 1935, t. II, էջ 146, 334, 568, 828, 831։

13 Հ. Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 279, ծան. 94։

14 R. Grousset, նշվ. աշխ., էջ 831։

15 Նույն տեղում, էջ 828։

Գաստոնի ու Բաղրասի նույնը չլինելու մասին ակնհայտ փաստ է 1193 թ. պատահած մի դեպք, որ արձանագրել են բազմաթիվ միջնադարյան ժամանակագիրներ։

Անտիոքի Բոհեմունդ III (1163—1201 թթ.) մեծ իշխանը մտադրվել էր խաբեությամբ ձերբակալել պարոն Լևոնին և Ռուբինյան իշխանությունից հողային խոշոր տիրույթներ կորզել։ Սակայն Սիբիլ (Sybille of Burzey) իշխանուհին իր ամուսնու մտադրության մասին լուր է ուղարկում Լևոնին։ Անտիոքի մեծ իշխանը հայոց պարոնին հրավիրում է Անտիոք՝ զվարճության ու կերուխումի։ Վերջինս ընդունում է հրավերը և իր հերթին, Մեծ իշխանին, իշխանուհուն, գունդստաբլ Ռաուլ դը-Մոնսին, մարաջախտ Բարթուղիմեին, քարտուղար Օլիվիեին և մյուսներին հրավիրում է սահմանային Գաստոն բնակավայրը։ Բոհեմունդ III-ը և իշխանուհին մեծաթիվ ուղեկիցներով գալիս են Գաստոն, որը պարոն Լևոնի կարգադրությամբ պաշարված էր հայ ռազմիկների կողմից։ Սկզբում նրանք Գաստոնի աղբյուրի մոտ հայոց պարոնի և նրա մերձավորների հետ ուրախ ժամանակ են անցկացնում։ Տեսնելով անտիոքցիների բազմությունը, Լևոնը խոհեմաբար մեծ իշխանին առաջարկում է զվարճությունները շարունակել Բաղրասի բերդում։ Վերջինս ընդունում է առաջարկը և բոլորը միասին տեղափոխվում են մոտակա Բաղրասի բերդը, որտեղ հայ ռազմիկները կալանավորում են անտիոքացիներին։ Այս դեպքերի նկարագրությունից պարզ երևում է, որ Գաստոնը և Բաղրասը նույնական չեն։

Գաստոնը ուրիշ բերդի հետ շփոթում է նաև Հ. Մ. Հովհաննեսյանը[16]։

1142 թ. Բյուզանդիայի Հովհաննես Կոմնենոս կայսրը մեծ բանակով շարժվում է Կիլիկիայից հարավ-արևելք և հասնում Եդեսիայի Թլպաշար բերդը, որտեղից ուղղվում է Քիլիս, Կիրհուս, Դարպսակ, Ջիսր Մուրադ փաշա և Գաստոնի կողմը[17]։ Կայսրը Անտիոքի Ռեմունդ (Ռայմոնդ) իշխանից հնազանդություն է պահանջում, բայց մերժում ստանալուց հետո սեպտեմբերի 13-ին ավերում է Գաստոնի շրջակայքն ու վերադառնում[18]։ Դրանից հետո Բյուզանդիայի և Անտիոքի իշխանության միջև կնքվում է դաշնակցություն ընդդեմ Ռուբինյան իշխանության։ Անտիոքի իշխանության տիրույթներում ծառայող Տաճարական ասպետների ու Թորոս II-ի միջև վեճեր էին գնում սահմանային Գաստոն ու Բաղրաս ամրոցների համար։ 1155 թ. դրանք հանգում են պատերազմի, որի բեմ է դառնում Աղեքսանդրեկը[19]։ Ըստ Միքայել Ասորու ասորերեն բնագրի և Գիյոմ դը Տիրի ժամանակագրության, հաղթանակը տարել էր Ռընո դը Շատիյոնը, իսկ Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանությունում առավելությունը տրվել է Թորոս II-ին։

Երկու կողմերի միջև շուտով հաստատվում է խաղաղություն, և Թորոս II-ը Անտիոքի իշխանությանն ու Տաճարական ասպետներին է թողնում Ասորիքի սահմանների մոտ եղած ամրոցներն ու տիրույթները[20], որոնց թվում նաև Գաստոնը։

---

16 Հ. Հովհաննեսյան, Հայաստանի բերդերը, «Բազմավեպ», 1960, № 738, էջ 181—182։

17 R. Grousset, նշվ. աշխ., էջ 146։

18 Զ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 428։

19 Իմա՝ Իսկենդերուն նավահանգիստ-քաղաք։

20 R. Grousset, նշվ. աշխ., էջ 334։

Ռուբինյան պարոն Մլեհը 1171 թ. գրավում է Գաստոնը, որը Ռուբեն II-ի գերի ընկնելուց հետո անցնում է Անտիոքի իշխանությանը (1185 թ.) և հանձնվում Տաճարական ասպետներին։ 1188 թ. էյուբյան Սալահէդդինի Ասորիքում կատարած հաղթարշավի ընթացքում Անտիոքի իշխանությունից կորզված բերդերի թվում հիշատակվում են նաև Սամայն Կապանը, Սարայը, Դարպսակը, Բաղրասն ու Գաստոնը (26 սեպտ. 1188 թ.)[21]։

1191 թ. պարոն Լևոնի թույլտվությամբ Ֆուլք իշխանը[22] եգիպտացիներից գրավում է Գաստոնը և Բաղրասը։ Կիլիկիայի հայկական պետության սահմանների մեջ մտցված հիշյալ տիրույթները տրվում են Ֆուլք իշխանին[23]։

Գաստոնի և Բաղրասի՝ հայոց ձեռքն անցնելու հանգամանքը անհանգրստացրել էր Տաճարական ասպետներին ու Անտիոքի մեծ իշխանին։ Նրանք պարոն Լևոնից պահանջում էին իրենց տալ Գաստոնը՝ պատճառաբանելով, թե այն ժամանակին իրենց է պատկանել։ Վեճերին խառնվում է նաև Հռոմի Ինոկենտիոս III պապը։ Լևոն I-ին ուղարկած նամակում նա խնդրում է Գաստոնը տալ Տաճարական ասպետներին (1199—1201 թթ.)[24]։ Լևոն I-ը անդրդվելի է մնում Պապի ու լատին ասպետների խնդրանքների նկատմամբ։ 1201 թ. Բոհեմունդ III-ի մահանալուց հետո նրա որդին՝ Բոհեմունդ IV-ը բռնագրավում է Անտիոքի իշխանության գահը։ Սրվում են երկու պետությունների հարաբերությունները։ 1203 թ. Լևոն I-ը Կիլիկիայից վտարում է բոլոր լատին ասպետներին, համարելով նրանց հավատարմության մեջ թերացողներ ու դավադիրներ։ 1205 թ. նա գրավում է Անտիոք մայրաքաղաքը, սակայն երեք օրից հետո քաշվում է այնտեղից, որովհետև լուր էր ստացվել, որ Հալեպի ամիրան Բոհեմունդ IV-ի դիմումով հարձակվելու է հայերի վրա։ Հաշտություն է կայանում Բոհեմունդ IV-ի կողմն անցած Տաճարական ասպետների ու Լևոն I թագավորի միջև։ 1206 թ. հայկական բանակը երկրորդ անգամ գրավում է Անտիոքը։ Գործերի հաջող ելքից հետո Լևոն I-ը Տաճարական ասպետներին նվիրում է Գաստոնը, իսկ Անտիոքի Ս. Պողոս վանքին՝ Գաստոնի աղբյուրը։

Գաստոնին ու Բաղրասին տիրող հայերը երկար տարիներ սահմանային այդ տիրույթների պաշտպանության գործը հանձնում էին Տաճարական ասպետներին կամ առանձին սահմանապահ բերդակալների, որոնք ենթարկվում էին մեծ իշխանին կամ ուղղակի թագավորին՝ Գաստոնից ձեռք բերված շահույթի մի մասը վճարելով իբրև տուրք։ Գաստոնը, Բաղրասը և առհասարակ մյուս տիրույթները լատին իշխաններին կամ ասպետներին իբր ավատ տրվում էին պետության նկատմամբ իրենց ցուցաբերած և ցուցաբերելիք ծառայությունների և հավատարմության դիմաց։ Նրանց պարտականությունն էր պաշտպանել սահմանները և մասնակցել պատերազմական գործողությունները

---

21 Նույն տեղում, էջ 828—831։ Տե՛ս նաև Գրիգոր Տղայի «Ողբ Երուսաղէմիս» պոեմի 2115—2172 տողերը (Գ ր ի գ ո ր Տ ղ ա, Բանաստեղծություններ և պոեմներ, աշխատասիրությամբ՝ Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1972, էջ 310)։

22 Ֆուլք իշխանը ազգակցական կապերով կապված էր Ռուբինյանների տան հետ. նրա մայրը Լևոն I թագավորի հորաքույրն էր։

23 Ղ. Ա լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 428։

24 V. L a n g l o i s, Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie, 1860, էջ 24, № 34 և էջ 72։ Տե՛ս նաև Lettres d'Innocent III (Ed. Baluze). liv. II, էջ 504 և հետ.

ներին։ Ծառայության թերացման կամ անհավատարմության դեպքում, թագավորի կարգադրությամբ, նրանք զրկվում էին ավատից։ Նման ավատներ ստացած իշխանները փաստորեն մեծ իշխանների գործակալները կամ վարձակալներն էին։

Կիլիկիայի հայկական պետության վարչակարգում թագավորից հետո երկրորդ անձնավորություն հանդիսացող «մեծ իշխաններից» Լևոն I-ի ազգական Սիր Ատանը, իբրև սեփականություն, ցմահ պահպանել էր Գաստոնը և Բաղրասը։ Այս երկու կառույցները պատկանել են Սիր Ատանին մինչև նրա սպանությունը (1221), որը երևում է բազմաթիվ վավերագրերից։ Այսպես, 1198 թվականի հունվարի 6-ին Լևոն I-ի թագադրության հանդիսավոր արարողությանը ներկաների ցուցակում առաջին տեղը տրված է «Իշխանն Պաղրսայ Ատաննին»[25]։ 1207, 1210, 1214 և 1218 թթ.[26] Լևոն I-ի կողմից Հիվանդանոցի (Hospitaliers) ասպետներին տրված պարգևագրերը վավերացնող իշխանների թվում հիշատակվող Սիր Ատանը (Adam de Gastum) նշված է որպես Գաստիմի (Gastim) կամ Գաստոնի (Guastone) տեր և սինիջալ[27]։ 1219—1221 թթ. Կիլիկիայի հայկական պետության երեք պայլերից մեկն էր Սիր Ատան (Sir Adam de Gastim)[28] մեծ իշխանը։

Անտիոքի Բոհեմունդ IV իշխանի ու Լևոն I-ի միջև Ռուբեն-Ռեմունդի գահակալական հաջորդության խնդրի պատճառով շարունակվում են վեճերը և պատերազմները։ 1212 թ. Լևոն I-ը էլ ավելի սաստկացնում է պատերազմը Բոհեմունդ IV-ի դեմ, որի պատճառով Հռոմի պապը բանադրանքի է ենթարկում հայոց թագավորին։ Այդ արարքը հակառակ արդյունք է տալիս, և հայկական բանակը Տաճարական ասպետներից ետ է վերցնում Գաստոնը և երրորդ անգամ մտնում Անտիոք (1213 թ.)։ Այս անգամ Անտիոքը ավարի է տրվում։ Հանգամանքներից ելնելով, պապը վերցնում է Լևոն I-ի նկատմամբ կրված բանադրանքը։ Լևոնի և Տաճարական ասպետների միջև հաստատվում է հաշտություն և հայոց թագավորը նրանց է վերադարձնում Գաստոնը։ Դրանից հետո Տաճարական ասպետները մինչև 1268 թ. դա պահում են իրենց ձեռքում։

1236 թ. Հալեպի սուլթանի հորեղբայր Թուրանշահը անհաջող հարձակում կատարեց Կիլիկիայի հայկական պետության սահմանապահ Բաղրաս բերդի վրա, որը պաշտպանում էին Տաճարական ասպետները։

Աբուլ-Ֆեդան գրում է, որ Հիջրի 666 թ. (22 սեպտ. 1267—9 սեպտ. 1268) մայիսի 27-ին մամլուկ սուլթան Բայբարսը Անտիոքը գրավելուց հետո զավթում է նաև հայերին պատկանող և Տաճարական ասպետների կողմից պաշտպանվող Բաղրասի բերդը։ Գաստոնը, լինելով Բաղրասի բերդին մերձակա մի կառույց, միշտ բախտակից է եղել նրան։

Երանից հետո ևս, հայերի ու եգիպտացիների միջև բազմաթիվ կռիվներ են մղվում Բաղրասին ու Գաստոնին տիրելու համար։ Ձեռքից ձեռք անցնող Գաստոնը կռիվների պատճառով կործանվում ու լքվում է։

---

25 «Սմբատ Սպարապետի Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 209։

26 V. Langlois, Le trésor des chartes d'Arménie ou cartulaire..., էջ 45, ծան. 5, էջ 131, 116, 123, 125, 126, 134, 136։

27 Նույն տեղում, էջ 45, 116, 134, 136։

28 Նույն տեղում, էջ 50։

КИЛИКИЙСКИЙ НАСЕЛЕННЫЙ ПУНКТ ГАСТОН

М. А. ДЖЕВАНРДЖЯН

(Резюме)

В статье исследуются сведения о местоположении и роли пограничного населенного пункта Гастон Киликийского армянского государства, сохранившиеся в трудах современных хронистов и путешественников. В частности, выясняются обстоятельства борьбы Киликийского армянского государства за удержание Гастона и соседней крепости Баграс.